ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀԱՆ-ՄԱԱՊՁԲ-Պ-23/10»

ք. Երևան «23» հունիս 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Սիրվարդ Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԱՎՏՈՄՈԲԻԼ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Վալերի Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **692 000** (վեց հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը,

եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	«ԱՎՏՈՄՈԲԻԼ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	ք.Երևան, Նար-Դոսի փող.
ՀՀ ֆինանսների նախարարության	69-14 տարածք
գործառնական վարչություն	Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011021921	Հ/Հ 2050022625461001
ՀՎՀՀ 02506264	ՀՎՀՀ 02849352
______________ Ս. Գևորգյան	______________ Ա. Հարությունյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«23» 06 2023թ. կնքված
"ՀՀԱՆ-ՄԱԱՊՁԲ-Պ-23/10» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								
հրավերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր քանակը	միավոր գին/ՀՀ դրամ	ընդհանուր պլանավորված գին/ՀՀ դրամ	Մատակարարման քանակը՝ ըստ ժամանակացույցի
1	**34351200/9**	ավտոմեքենաների անիվներ	Անվադող 185/65 R15 մարդատար ավտոմեքենաների համար, ձմեռային, առանց օդախցիկի, գույնը՝ սև: Անվադողի վրա պետք է նշված լինի արտադրող երկիրը և արտադրողը, սահմանելի արագության ինդեքսը՝ ոչ պակաս T(190), բեռնվածության ինդեքսը՝ 86(530կգ), անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ 2022թ.: Չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Նշված բոլոր բնութագրերը անվադողի վրա պետք է միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի: Ապրանքների փոխարինումը և անվահեծերի կարգաբերումը	հատ	4	17500	70000	2023թ. հոկտեմբեր

			իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում:					
2	**34351200/10**	ավտոմեքենաների անիվներ	Անվադող 195/65 R15 մարդատար ավտոմեքենաների համար, ամառային, առանց օդախցիկի, գույնը՝ սև: Անվադողի վրա պետք է նշված լինի արտադրող երկիրը և արտադրողը, սահմանելի արագության ինդեքսը՝ ոչ պակաս V(240), բեռնվածության ինդեքսը՝ 95(690 կգ), անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ 2022թ.: Չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Նշված բոլոր բնութագրերը անվադողի վրա պետք է միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի: Ապրանքների փոխարինումը և անվահեծերի կարգաբերումը իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում:	հատ	4	18500	74000	2023թ. հուլիս
3	**34351200/11**	ավտոմեքենաների անիվներ	Անվադող 215/55 R16 մարդատար ավտոմեքենաների համար, ձմեռային, առանց օդախցիկի, գույնը՝ սև: Անվադողի վրա պետք է միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի արտադրող երկիրը և արտադրողը, սահմանելի արագության ինդեքսը՝ ոչ պակաս V(240), բեռնվածության ինդեքսը՝ 97(730 կգ), անվադողի արտադրության	հատ	4	25000	100000	2023թ. հոկտեմբեր

			տարեթիվը ոչ շուտ 2022թ.: Չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Նշված բոլոր բնութագրերը անվադողի վրա պետք է միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի: Ապրանքների փոխարինումը և անվահեծերի կարգաբերումը իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում:					
			Անվադող 215/60 R16 մարդատար ավտոմեքենաների համար, ամառային, առանց օդախցիկի, գույնը՝ սև: Անվադողի վրա պետք է միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի արտադրող երկիրը և արտադրողը, սահմանելի արագության ինդեքսը՝ ոչ պակաս V(240), բեռնվածության ինդեքսը՝					
4	**34351200/12**	ավտոմեքենաների անիվներ	99 (775 կգ), անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ 2022թ.: Չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Նշված բոլոր բնութագրերը անվադողի վրա պետք է միջազգային նորմերին	հատ	4	22000	88000	2023թ. հուլիս

			համապատասխան դաջված լինի: Ապրանքների փոխարինումը և անվահեծերի կարգաբերումը իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում:					
5	**34351200/13**	ավտոմեքենաների անիվներ	Անվադող 215/60 R16 մարդատար ավտոմեքենաների համար, ամառային, առանց օդախցիկի, գույնը՝ սև: Անվադողի վրա պետք է միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի արտադրող երկիրը և արտադրողը, սահմանելի արագության ինդեքսը՝ ոչ պակաս H(210), բեռնվածության ինդեքսը՝ 99 (775 կգ), անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ 2022թ.: Չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Նշված բոլոր բնութագրերը անվադողի վրա պետք է	հատ	4	24000	96000	2023թ. հուլիս
			միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի: Ապրանքների փոխարինումը և անվահեծերի կարգաբերումը իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում:					
6	**34351200/14**	ավտոմեքենաների անիվներ	Անվադող 215/55 R17 մարդատար ավտոմեքենաների համար, ամառային, առանց օդախցիկի, գույնը՝ սև: Անվադողի վրա պետք է միջազգային նորմերին	հատ	4	22000	88000	2023թ. հուլիս

			համապատասխան դաջված լինի արտադրող երկիրը և արտադրողը, սահմանելի արագության ինդեքսը՝ ոչ պակաս Y(210), բեռնվածության ինդեքսը՝ 94 (670 կգ), անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ 2022թ.: Չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դողերի տեխնիկական կանոնակարգի»: Նշված բոլոր բնութագրերը անվադողի վրա պետք է միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի: Ապրանքների փոխարինումը և անվահեծերի կարգաբերումը իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում:					
			Անվադող 215/55 R17 մարդատար ավտոմեքենաների համար, ամառային, առանց օդախցիկի, գույնը՝ սև: Անվադողի վրա պետք է միջազգային նորմերին					
7	**34351200/15**	ավտոմեքենաների անիվներ	համապատասխան դաջված լինի արտադրող երկիրը և արտադրողը, սահմանելի արագության ինդեքսը՝ ոչ պակաս R (170), բեռնվածության ինդեքսը՝ 98 (750 կգ), անվադողի արտադրության տարեթիվը ոչ շուտ 2022թ.: Չօգտագործված: Տեխնիկական պահանջները, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N	հատ	4	24000	96000	2023թ. հուլիս

			1558-Ն որոշմամբ հաստատված «Օդաճնշական դռների տեխնիկական կանոնակարգի»: Նշված բոլոր բնութագրերը անվադողի վրա պետք է միջազգային նորմերին համապատասխան դաջված լինի: Ապրանքների փոխարինումը և անվահեծերի կարգաբերումը իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում:					
8	31442100/3	կուտակիչ մարտկոց	Մարդատար ավտոմեքենայի Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6ՍՏ-75Ա, 12 Վ: Սառը մեկնարկային հոսանքը (EN) 600Ա ոչ պակաս: Կլեմոների + աջ: Չափսերը՝ երկարությունը 255-260մմ, լայնությունը 170-175մմ, բարձրությունը առավելագույնը 225մմ: Մարտկոցի արտադրության տարեթիվը 2022 թվականի: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի մատակարարումը և բեռնաթափումը իրականացնվում է	հատ	1	30000	30000	2023թ. հուլիս
			Մատակարարի կողմից և իր միջոցներով: կուտակիչ մարտկոցի փոխարինումը և ստուգումն իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում: Փոխարինված կուտակիչ մարտկոցի համար տրվում է երաշխիքային ժամկետ՝ մարտկոցը մեքանայի վրա տեղադրելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի					

			հայտ են եկել թերություններ, ապա Մատակարարը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունը:					
9	31442100/4	կուտակիչ մարտկոց	Մարդատար ավտոմեքենայի Կապարաթթվային կուտակիչ մարտկոց 6US-85Ա, 12 Վ: Սառը մեկնարկային հոսանքը (EN) 600Ա ոչ պակաս: Կլեմոների + աջ: Չափսերը՝ երկարությունը 255-260մմ, լայնությունը 170-175մմ, բարձրությունը առավելագույնը 225մմ: Մարտկոցի արտադրության տարեթիվը 2022 թվականի: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ Ապրանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքի մատակարարումը և բեռնաթափումը իրականացնվում է Մատակարարի կողմից և իր միջոցներով: կուտակիչ մարտկոցի փոխարինումը և ստուգումն իրականացվում է Մատակարարի կողմից՝ ըստ Պատվիրատուի պահանջի, Երևան քաղաքում: Փոխարինված կուտակիչ	հատ	1	50000	50000	2023թ. հուլիս
			մարտկոցի համար տրվում է երաշխիքային ժամկետ՝ մարտկոցը մեքանայի վրա տեղադրելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխքիային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Մատակարարը պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունը:					

Մատակարարման հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 23:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ արդարադատության նախարարություն	«ԱՎՏՈՄՈԲԻԼ» ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	ք.Երևան, Նար-Դոսի փող. 69-14 տարածք
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 900011021921	Հ/Հ 2050022625461001
ՀՎՀՀ՝ 02506264	ՀՎՀՀ 02849352
Ս. Գևորգյան /ստորագրություն/ Կ.Տ.	տնօրեն /ստորագրություն/ Կ.Տ.

Հավելված N 2
«23» 06 2023թ. կնքված
"ՀՀԱՆ-ՄԱԱՊՁԲ-Պ-23/10» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	**34351200/9**	ավտոմեքենաների անիվներ	70000	70000	70000	70000	70000	70000	70000	70000
2	**34351200/10**	ավտոմեքենաների անիվներ	74000	74000	74000	74000	74000	74000	74000	74000
3	**34351200/11**	ավտոմեքենաների անիվներ	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000
4	**34351200/12**	ավտոմեքենաների անիվներ	88000	88000	88000	88000	88000	88000	88000	88000
5	**34351200/13**	ավտոմեքենաների անիվներ	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000
6	**34351200/14**	ավտոմեքենաների անիվներ	88000	88000	88000	88000	88000	88000	88000	88000
7	**34351200/15**	ավտոմեքենաների անիվներ	96000	96000	96000	96000	96000	96000	96000	96000
8	**31442100/3**	կուտակիչ մարտկոց	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000

9	**31442100/4**	կուտակիչ մարտկոց	50000	50000	50000	50000	50000	50000	50000	50000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ արդարադատության նախարարություն
ՀՀ ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011921921
ՀՎՀՀ 02506264

Ս. Գևորգյան
/ստորագրություն/
L.S.

ՎԱՃԱՌՈՂ

«ԱՎՏՈՄՈԲԻԼ» ՍՊԸ
ք.Երևան, Նար-Դոսի փող.
69-14 տարածք
Ինեկոբանկ ՓԲԸ
Հ/Հ 2050022625461001
ՀՎՀՀ 02849352

Հ.Գրիգորյան
/ստորագրություն/
L.S.

Հավելված 3
«23» 06 2023թ. կնքված
"ՀՀԱՆ-ՄԱԱՊՁԲ-Պ-23/10» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		մատակարարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«23» 06 2023թ. կնքված
"ՀՀԱՆ-ՄԱԱՊՁԲ-Պ-23/10» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն